

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)
ԿՐԹՈՒԹՅԱՆ**

**0732.06.4 «ԱՏԱԴՁԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԱՆՐԱՀԱՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ, ԱՊԱԿԵԳՈՐԾԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
0732.06.02.4 «ՀՅՈՒՄՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2015

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեսավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
		Քնն.	Ստուգարք	Կուրսաշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն	Այդ թվում			1-րդ կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս	
						Ընդամենը	Տես. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ.	Սեմինար պարապմունք	1-րդ կիս. 2աբ.	2-րդ կիս. 2աբ.	3-րդ կիս. 2աբ.	4-րդ կիս. 2աբ.	5-րդ կիս. 17 2աբ.
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5,6տ		72	52	20						36	36
2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		6տ		18	12	6							18
3	Իրավունքի հիմունքներ		6տ		36	28	8							36
4	Պատմություն		5տ		36	30	6						36	
5	Օտար լեզու		5,6տ		60	18	42						32	28
6	Ֆիզիկուլտուրա		5,6տ		62	4	58						34	28
7	Լանդշավտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		6տ		36	28	8							36
8	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		6տ		18	18								18
	ԸՆԴԱՄԵՆԸ				338	190	148						138	200
2.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
1	Հաղորդակցություն		5տ		36	10	26						36	
2	Անվտանգություն և առաջին օգնություն		5տ		36	8	28						36	
3	Համակարգչային օպերատորություն		6տ		36	12	24						36	
	ԸՆԴԱՄԵՆԸ				108	30	78						108	
3.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
1	Գծագրության հիմունքներ		5տ		36	12	24						36	
2	Թույլտվածքներ և նստեցվածքներ, մակերեսայինների անհարթություններ		5տ		24	10	14						24	

3	Չափիչ, չափանշման գործիքներ եվ չափումներ կատարելու հմտություններ		5տ		18	8	10						18	
4	Փայտանյութերի հիմնական հատկությունների բնութագրման ունակություն		5տ		36	12	24						36	
					114	42	72						114	
5	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
6	Ձեռքի գործիքներով աշխատանքների հմտություններ		5տ		62	16	46						62	
7	Հյուսնային միացումներ պատրաստելու, ամրացնելու հմտություններ		5տ		96	36	60						96	
8	Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ		5տ		90	28	62						90	
9	Դռների պատրաստման հմտություններ		6տ		72	16	56							72
10	Պատուհանների պատրաստման հմտություններ		6տ		72	12	60							72
11	Տախտակե հատակի փայտե շինվածքամասերի պատրաստման հմտություններ		6տ		56	22	34							56
12	Տանիքի փայտե շինվածքամասերի պատրաստման հմտություններ		6տ		72	16	56							72
					520	146	374						248	272
5.	ԸՆՏՐՈՎԻ				24									24
	ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ԺԱՄԵՐ				12								4	8
					1116								612	504
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				100									
	Շաբաթվա ժամերի քանակը												36	36

	IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՇ ՎԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Վարվելակերպի հիմունքներ					ՎԱԲԻՆԵՏՆԵՐ
2	Ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքներ				1	Մասնագիտական տեխնոլոգիայի
					2	Հատուկ մասնագիտական
					3	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ
					4	Օտար լեզվի
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ		5	Աշխատանքի անվտանգության
1	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	6	2			ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
2	Նախաավարտական արտադրական պրակտիկա	6	6			ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ
			8			ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻ
	VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ				1	Փայտանյութերի հետազոտման և փորձակման
	Հունիսի 29-ից հուլիսի 5-ը շրջանում Համալիր պետական քննություն մասնագիտական մոդուլներից					
					1	Փայտամշակման

	1	Մարզադահլիճ
	2	Մարզահրապարակ

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-3-15-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունակական գործընկերության համար:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,

	5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած

	<p>ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած</p>

	<p>ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p>

	Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-3-15-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4) ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները

Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը:</p> <p>Ստորև ներկայացվում է Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը: կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p>

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն) 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց</p>

	<p>կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ցուցաբերել առաջին օգնություն</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-3-15-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի մոտ համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը, 2) խմբագրի և ֆորմատավորի տեքստ, 3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ, 4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում, 5) կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով, 6) աշխատի համացանցով:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն), 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office), 6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, 9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանների , թեստերի ու գործնական աշխատանքների միջոցով: Ուսանողներին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների , օժանդակ և տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվի առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունները ` կապված թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու , ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու հետ:Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջականությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ, և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ

	տեխնիկական սաքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստերի և գործնական աշխատանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու, տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուններ և այլն), 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,

	5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները համալրելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
Կատարման չափանիշներ	1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapec պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,գծագրում է տեքստային բլոկներ, 6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատում իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկների գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում

	գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրով
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակներ և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթակա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել համացանցային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել , օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության: Արդյունքի փեռքբերումը բավարար է , եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջականությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	<p>ՀՅՍ-3-15-001</p>
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տարբեր աշխատանքային գծագրեր կարդալու, փայտե հյուսնային կառուցվածքների հանգույցների և հանգուցամասերի էսքիզներ և աշխատանքային գծագրեր կատարելու</p>

	հմտություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի գծագրական թղթերի պայմանական ֆորմատներ, 2) կատարի երկրաչափական կառուցումներ, 3) ներկայացնի մաքրության դասերի տարբերանշանները գծագրերում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գծագրական թղթերի պայմանական ֆորմատներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է պատկերացնում գծագրական թղթի ֆորմատները տարբեր գծագրերի համար, 2) ճիշտ է մեկնաբանում մակագրերը, շրջանակը և շտամպը, 3) կարողանում է մեկնաբանել մասշտաբները և պայմանական նշանները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել գծագրական թղթի ֆորմատները, բացատրել մակագրերը, գծագրի շրջանակը և շտամպը, մեկնաբանել մասշտաբները և պայմանական նշանները, լրացնել շտամպ, կատարել մակագրեր, դնել պայմանական նշաններ, կիրառել մասշտաբներ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները, ոչ էական փոքր թերություններով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ձևավորված գծագրեր, գծագրական գործիքներ, նյութեր և պարագաներ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել երկրաչափական կառուցումներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պատկերում ուղղանկյուն պրիզման երեք հարթությունների վրա, 2) ճիշտ է կատարում չափերը և չափագծերը, 3) ճիշտ է կատարում տիպային էսքիզներ գծագրի բնօրինակից, 4) ճիշտ է պրոեկտում առարկայի եզրերը, նիստերը և գագաթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել ուղղանկյուն պրիզմայի պրոյեկտում երեք հարթությունների վրա: Ուսանողը պետք է, բնօրինակից կատարի տիպային էսքիզներ, չափադրումներ, որևէ առարկայի նիստերի, եզրերի և գագաթների պրոյեկտումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները, ոչ էական փոքր թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, գծագրական գործիքներ, նյութեր և պարագաներ, փայտե տիպային դետալների նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մաքրության դասերի տարբերանշանները գծագրերում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մաքրության դասերը, 2) ճիշտ է պատկերացնում բութակ-բլթանցքների և բացակ-ձգվածքների ճշտության դասերը էսքիզների ցուցադրումով, 3) ճիշտ է կատարում ակոսների և կատարների ցուցադրումը գծագրերում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է աշխատանքային գծագրերում և էսքիզներում ներկայացնի մաքրության դասերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Ներկայացնել փայտանյութի մաքրության դասերը, էսքիզների վրա ցուցադրել բութակ-բլթանցքների բացակների և</p>

	<p>ձգվածքների չափերը, աշխատանքային գծագրերում ներկայացնել ակոսները և կատարները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է կատարում առաջադրանքը՝ ոչ էական բացթողումներով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ճարտարագիտական տարբեր գծագրեր, գծագրական գործիքներ, նյութեր և պարագաններ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ԹՈՒՅԼՏՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՆՍԵՑՎԱԾՔՆԵՐ, ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ փայտե հյուսնային կառուցվածքների հանգուցամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների, մակերևույթների անհարթությունների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել դրանք գործնականում կիրառելու բավարար հմտություններ:
Մոդուլի տևողությունը	24 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-001 «Գծագրության հիմունքներ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) պարզաբանի հանգուցամասերի չափերի թույլտվածքները և նստեցվածքները, ճշտության պայմանական նշանակումները, 2) ներկայացնի փայտե հանգուցամասերի մեխանիկական մշակման ժամանակ առաջացած անհարթությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Պարզաբանել հանգուցամասերի չափերի թույլտվածքները և նստեցվածքները, ճշտության պայմանական նշանակումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում հանգուցամասերի չափերի թույլատրելի շեղումների առկայությունը,

	<p>2) ճիշտ է պարզաբանում հանգուցամասերի մշակման ճշտությունը և այդ ճշտությունը կանխորոշող պայմանները,</p> <p>3) ճիշտ է բնութագրում տարբեր հանգուցամասերի նոմինալ, սահմանային և իրական չափերը,</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում մշակվող հանգուցամասերի մակերևույթների մաքրությունը,</p> <p>5) ճիշտ է պարզաբանում տարբեր հանգուցամասերի փոխադարձ փոխարինելիության սկզբունքը,</p> <p>6) ըստ առաջադրանքի ճիշտ է հաշվարկում թույլտվածքը, նստեցվածքը, բացակը, ձգվածքը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է ներկայացնի հանգուցամասերի չափերի թույլտվածքները և նստեցվածքները, ճշտության պայմանական նշանակումները, հաշվարկի թույլտվածքը, նստեցվածքը, բացակը, ձգվածքը</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Չափերի թույլատրելի շեղումները, մշակման ճշտությունը, դրանք կանխորոշող պայմանները, մակերևույթների մաքրությունը: Հանգուցամասերի նոմինալ, սահմանային և իրական չափերը, տարբեր հանգուցամասերի փոխադարձ փոխարինելիության սկզբունքը:</p> <p>Թույլտվածքի հաշվարկ, նստեցվածքի հաշվարկ, բացակի հաշվարկ, ձգվածքի հաշվարկ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է կատարում առաջադրանքը, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ փայտամշակման համար թույլտվածքների և նստեցվածքների վերաբերյալ գրականություն, պաստառներ, աղյուսակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել փայտե հանգուցամասերի մեխանիկական մշակման ժամանակ առաջացած անհարթությունները</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է մեկնաբանում անհարթությունների բնույթը, տեսակները և պարամետրերը,</p> <p>2) ճիշտ է տարբերակում աշխատանքային գծագրերում տրված անհարթությունների վերաբերող պայմանական նշանները և պատկերում աշխատանքային գծագրերում:</p>

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է ճանաչի և ներկայացնի փայտե հանգուցամասերի մեխանիկական մշակման ժամանակ առաջացած անհարթությունները, նշի հնարավոր պատճառները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Փայտե հանգուցամասերի անհարթությունների տեսակները՝ ալիքաձևություն, կորություն, գոգավորություն: Դրանց պարամետրերը՝ քայլ, խորություն, երկարություն և այլն: Անհարթությունների պարամետրերի չափումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքը՝ թույլ տալով ոչ էական բացթողումներ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ փայտամշակման համար թույլտվածքների և նստեցվածքների վերաբերյալ գրականություն, պաստառներ, աղյուսակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը «ԶԱՓԻՉ, ԶԱՓԱՆՇՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԶԱՓՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-003
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել չափիչ և չափանշման գործիքներով չափումներ, ստուգումներ և չափանշումներ կատարելու կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>18 ժամ որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-001 «Գծագրության հիմունքներ» և ՀՅՍ-3-15-002 «Թույլտվածքներ և նստեցվածքներ, մակերևույթների անհարթություններ» մոդուլները:</p>
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <p>1) կատարի չափիչ գործիքներով չափումներ և ստուգումներ,</p>

	2) կատարի չափանշման գործիքներով չափանշումներ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել չափիչ գործիքներով չափումներ և ստուգումներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում չափիչ գործիքների տեսակները, 2) ճիշտ է մեկնաբանում չափման գործընթացը, դրա կարևորությունը, ներկայացնում է կիրառվող ժամանակակից չափման միավորները, 3) ճիշտ է ներկայացնում չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները, 4) ճիշտ է կատարում չափումներ և ստուգումներ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է կատարել չափումներ և ստուգումներ՝ կիրառելով չափման գործիքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <ul style="list-style-type: none"> -հիմնական չափիչ գործիքներ՝ չափերիզ, պահեստային մետր, քանոն, անկյունաքանոն, անկյունացույց, ներսաչափ, խորաչափ, հարթաչափ, ուղղալարով հարթաչափ, ժապավենային մետր, անկյունաչափ և այլն: -չափման միավորներ՝ միլիմետր, սանտիմետր, մետր -չափման մեթոդներ՝ <ul style="list-style-type: none"> ա. ուղղակի բ. անուղղակի գ. կոմպլեքսային <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անհրաժեշտ նյութեր և չափիչ գործիքներ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել չափանշման գործիքներով չափանշումներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում չափանշման գործընթացը, 2) ճիշտ է ներկայացնում է չափանշման գործիքները, 3) ճիշտ է կատարում չափանշման գործընթացներ՝ ըստ առաջադրանքի:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի չափանշման գործիքներով կատարել համապատասխան գործողություններ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝ Չափանշման գործիքները՝ մետր, ձողակարկին, անկյունակ, չափակարկին, խազքաշ և այլն: Դրանց կիրառման պայմանները: Չափանշման գործողությունների կատարման առանձնահատկությունները. զուգահեռ ուղիղ գծերի նշում անկյունաքանոնի օգնությամբ, փոխուղղահայաց խազերի գծանշում կարկինի և անկյունաքանոնի օգնությամբ և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքները՝ ոչ էական թերություններով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անհրաժեշտ նյութեր և չափանշման գործիքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓԱՅՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել փայտանյութերը տարբերակելու, փայտանյութի հիմնական հատկությունները որոշելու, արատները տարբերակելու, տարատեսակ արատների չափումներ կատարելու, փայտանյութը տարբեր վնասակար ազդեցություններից պաշտպանելու միջոցները մեկնաբանելու ունակություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ որից՝

	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի փայտանյութերի տեսակները ըստ բնի կտրվածքների, 2) ներկայացնի փայտանյութերի ֆիզիկական հատկությունները, 3) ներկայացնի փայտանյութերի մեխանիկական հատկությունները, 4) ներկայացնի փայտանյութի արատները և դրանք վերացնելու ձևերը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել փայտանյութերի տեսակները ըստ բնի կտրվածքների
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում բնի կտրվածքները՝ լայնական (ճակատային), շառավղային և շոշափողային, 2) ճիշտ է որոշում փայտատեսակը ըստ բնի կտրվածքում առկա փայտե մանրաթելիկների դասավորությունից, տարիքային շերտի տեսանելիությունից, գույնից, միջուկային ճառագայթների քանակից և չափերից, 3) կարողանում է որոշել փայտատեսակը ճակատային կտրվածքով, 4) ճիշտ է ներկայացնում միջուկավոր և անմիջուկ փայտատեսակները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողը պետք է մեկնաբանի առաջադրվող փայտանմուշի կտրվածքը և ըստ կտրվածքի կառուցվածքային տարրերի որոշի փայտանմուշի տեսակը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ Տարբեր փայտանյութերի կտրվածքների կառուցվածքային տարրերը (բնափայտի շերտ (սպիտկեն), միջուկ, ծուծային ճառագայթներ, փայտաթելիկների դասավորություն, գույն, հոտ): Դրանց կիրառումը մասնագիտական գործունեության ընթացքում: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական

	թերություններով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, պաստառներ, տարբեր ծառատեսակների բնափայտի հիմնական կտրվածքների նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել փայտանյութերի ֆիզիկական հատկությունները՝ գույն, փայլ հոտ, խոնավություն, խտություն
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում փայտանյութի ֆիզիկական հատկությունները՝ գույն, փայլ հոտ, խոնավություն, խտություն, 2) կարողանում է ճանաչել փայտատեսակը ըստ ֆիզիկական հատկությունների, 3) ճիշտ է ներկայացնում փայտանյութի ջերմաէլեկտրա և ձայնահաղորդականությանը վերաբերող հատկությունները, 4) կարողանում է մեկնաբանել փայտանյութի ուռչելու և չորապակսորդ տալու պատճառը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի պատասխանել փայտանյութի հիմնական ֆիզիկական հատկությունների (գույն, փայլ հոտ, խոնավություն, խտություն, ջերմաէլեկտրա և ձայնահաղորդականություն և այլն) վերաբերյալ հարցերին, ինչպես նաև որոշել փայտանյութի տեսակը՝ ըստ ֆիզիկական հատկությունների: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե թեստային հարցերին տրվում են ճիշտ պատասխաններ՝ ոչ էական թերություններով, իսկ գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական համապատասխան գրականություն, պաստառներ, փայտատեսակների նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել փայտանյութերի մեխանիկական հատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է որոշում փայտանյութի ամրությունը ըստ փայտատեսակի,

	<p>2) ճիշտ է որոշում փայտատեսակների առաձգական կամ պլաստիկ լինելը,</p> <p>3) ճիշտ է գնահատում փայտանյութի ամրության աստիճանը,</p> <p>4) ճիշտ է գնահատում տարբեր կտրող գործիքի վրա փայտանյութերի ազդեցության մեխանիզմը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գնահատել փայտանյութի մեխանիկական հատկությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ: Թույլատրվում է ոչ էական թերություններ և շեղումներ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական համապատասխան գրականություն, պաստառներ, փայտատեսակների նմուշներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել փայտանյութի արատները (սնկային կենսաբանական, ոստեր, ճաքեր և մեխանիկական մշակման ժամանակ առաջացած) և դրանք վերացնելու ձևերը</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում արատների տեսակները՝ սնկային կենսաբանական, ոստեր, ճաքեր և մեխանիկական մշակման ժամանակ առաջացած արատներ,</p> <p>2) ճիշտ է որոշում արատների չափերը և դրանց՝ հնարավորինս վերացման ձևերը,</p> <p>3) ճիշտ է տարբերակում փայտատեսակները՝ ըստ արատների,</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում մեխանիկական մշակման ժամանակ առաջացող վնասվածքները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է ճանաչի փայտանյութի արատները (սնկային, կենսաբանական, ոստեր, ճաքեր և մեխանիկական մշակման ժամանակ առաջացած) և վերացնի այդ արատները տարբեր եղանակներով:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <p>Փայտանյութի արատների տեսակները, դրանց դրսևորման ձևերը: Արատների չափումները, դրանց վերացման եղանակները:</p>

	Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական համապատասխան գրականություն, պաստառներ, տարբեր արատներով փայտանմուշներ, համապատասխան գործիքներ հարմարանքներ և սարքավորումներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ՁԵՌՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ձեռքի գործիքներով հյուսնային աշխատանքներ կատարելու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	62 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 46 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-004 «Փայտանյութերի հիմնական հատկությունների բնութագրման ունակություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կատարի տիպային աշխատանքներ ձեռքի ընդհանուր նշանակության գործիքներով, օգտվել սևեռող հարմարանքներից, 2) կատարի տիպային աշխատանքներ ձեռքի հատման և սղոցման գործիքներով, օգտագործել սևեռող հարմարանքներ, 3) կատարի տիպային աշխատանքներ ձեռքի կտրող գործիքներով, օգտագործել սևեռող հարմարանքներ, 4) կատարի տիպային աշխատանքներ ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով, օգտագործել սևեռող հարմարանքներ:

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել տիպային աշխատանքներ ձեռքի ընդհանուր նշանակության գործիքներով, օգտվել սևեռող հարմարանքներից
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, նախատեսված սարքավորումները և դրանց կառուցվածքը, 2) ճիշտ է մեկնաբանում ձեռքի գործիքներով ըստ նշանակության կատարվող աշխատանքների բնութագրերը, 3) ճիշտ է մեկնաբանում սևեռող հարմարանքների աշխատանքի սկզբունքը, 4) ճիշտ է մեկնաբանում մուրճերի տեսակները, կարողանում կատարել դրանցով տիպային աշխատանքներ՝ օգտվելով նաև սևեռող հարմարանքներից, 5) ճիշտ է կատարում աքցանով, տափաշուրթով, համաքցանով, լրափորիչով, սեպակերպ և խաչակերպ պտուտակիչներով տիպային աշխատանքներ՝ օգտվելով նաև սևեռող հարմարանքներից, պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողը պետք է ձեռքի գործիքներով՝ տարբեր տեսակի մուրճերով, աքցաններով, տափաշուրթերով, լրափորիչով, սեպակերպ և խաչակերպ պտուտակիչներով կատարի տիպային աշխատանքներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <p>Աշխատատեղը և դրան ներկայացվող պահանջները՝ օդափոխություն, լուսավորություն, գործիքների դասավորություն և էլեկտրասանվտանգություն, աշխատասեղանների, գործիքապահարանների առկայություն:</p> <p>Ձեռքի գործիքները՝ դրեր, դանակներ, սղոցներ, ուրագներ, մուրճեր, ռանդաներ, խարտոցներ և այլն: Դրանց կիրառման պայմանները:</p> <p>Սևեռող /ֆիքսող/ հարմարանքները՝ տարբեր չափերի սեղմակներ, սեպեր, մամլիչներ և այլն, մշակվող դետալները ֆիքսելու համար: Դրանց բնութագրերը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ: Գործնական աշխատանքները կատարվելու են համապատասխան աշխատանքային պայմաններով և գործիքային հագեցվածությամբ փայտամշակման արհեստանոցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել տիպային աշխատանքներ ձեռքի հատման և սղոցման գործիքներով, օգտագործել սևեռող հարմարանքներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է մեկնաբանում տարբեր տեսակի ձեռքի հատման գործիքներով կատարվող աշխատանքների բնութագիրը, կատարում դրանցով տիպային աշխատանքներ, 2) ճիշտ է մեկնաբանում սղոցման գործիքներով կատարվող աշխատանքների բնութագիրը, ներկայացնում սղոցման գործիքների տեսակները և կառուցվածքները, 3) ճիշտ է կատարում տարբեր տեսակի սղոցման գործիքներով տիպային աշխատանքներ՝ օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, 4) պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է շարունակական գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է կատարի անհրաժեշտ մասնագիտական գործողությունները՝ կիրառելով համապատասխան գործիքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <p>Ձեռքի սղոցման գործիքների տեսակները՝ սղոց, նրբասղոց, երկկողմանի սղոց, հրովի-քաշովի սղոց, ձեռքի էլեկտրական սղոց, դրանց կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:</p> <p>Ձեռքի հատման գործիքների տեսակները՝ դրեր, ռանդաներ, ուրագներ և այլն, դրանց կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ

	<p>է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ: Գործնական աշխատանքները կատարվելու են համապատասխան աշխատանքային պայմաններով և գործիքային հագեցվածությամբ փայտամշակման արհեստանոցում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Կատարել տիպային աշխատանքներ ձեռքի կտրող գործիքներով, օգտագործել սևեռող հարմարանքներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է մեկնաբանում տարբեր կտրող գործիքներով կատարվող աշխատանքների բնութագրերը, 2) ճիշտ է կատարում տարբեր տեսակի ռանդաններով տիպային աշխատանքներ՝ օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, 3) ճիշտ է կատարում տարբեր տեսակի դուրերով տիպային աշխատանքներ՝ օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, 4) ճիշտ է կատարում տարբեր տեսակի դանակներով տիպային աշխատանքներ՝ օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, 5) ճիշտ է կատարում տարբեր տեսակի խարտոցներով տիպային աշխատանքներ՝ օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, 6) ճիշտ է կատարում տարբեր տեսակի ձեռքի էլեկտրական ռանդաններով տիպային աշխատանքներ, 7) պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում է աշխատել ձեռքի կտրող գործիքներով:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Ձեռքի կտրող գործիքները՝ տարբեր տեսակի էլեկտրական սղոցներ, հատիչներ, կացիններ, դանակներ, և այլն, դրանց կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, կիրառման պայմանները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ: Գործնական աշխատանքները կատարվելու են համապատասխան աշխատանքային պայմաններով և գործիքային հագեցվածությամբ փայտամշակման արհեստանոցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կատարել տիպային աշխատանքներ ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով, օգտագործել սևեռող հարմարանքներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում ձեռքի գայլիկոնման սարքերով և գործիքներով կատարվող աշխատանքների բնութագրերը, 2) ճիշտ է ներկայացնում ձեռքի գայլիկոնման սարքերի ու գործիքների տեսակները, 3) ճիշտ է կատարում ձեռքի շաղափիչով տարբեր գայլիկոններով տիպային աշխատանքներ՝ օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, 4) ճիշտ է կատարում տարբեր տեսակի գչիրներով տիպային աշխատանքներ՝ օգտագործելով նաև սևեռող հարմարանքներ, 5) պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կիրառել ձեռքի գայլիկոնման գործիքներն ու սարքերը, դրանցով կատարել տիպային աշխատանքներ՝ կիրառելով սևեռող հարմարանքներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <p>Ձեռքի գայլիկոնման գործիքների և սարքերի տեսակները՝ ձեռքի մեխանիկական գայլիկոնիչ, ձեռքի էլեկտրական գայլիկոնիչ, շաղափիչ և այլն, դրանց կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, կիրառման պայմանները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ

	է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ: Գործնական աշխատանքները կատարվելու են համապատասխան աշխատանքային պայմաններով և գործիքային հագեցվածությամբ փայտամշակման արհեստանոցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 գործնական աշխատանք՝ 10
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՅՈՒՄՆԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հյուսնային միացումներ պատրաստելու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	96 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 36 ժամ գործնական աշխատանք՝ 60 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-005 «Ձեռքի գործիքներով աշխատանքների հմտություններ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կատարի ամրակման աշխատանքներ, 2) կատարի սոսնձային միացումներ, 3) կատարի անկյունային միացումներ, 4) կատարի ճակատային միացումներ, 5) կատարի կողային միացումներ, 6) կատարի T-աձև և խաչաձև միացումներ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել ամրակման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ամրակների տեսակները,

	<p>2) ըստ ամրակների տեսակների ճիշտ է ներկայացնում կիրառման տեղերը,</p> <p>3) տարբեր տեսակի ամրակներով կատարում է ամրակման աշխատանքներ,</p> <p>4) աշխատանքի ընթացքում պահպանում է անվտանգության կանոնները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է շարունակական գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել ամրակման աշխատանքներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Ամրակների տեսակները՝ փայտամեխ, բուֆակ, սեպ, երիթ, մեխ, գամ, անուր, անկյունակ, ճարմանդ, հաստամեխ, դրանց կիրառումը հյուսնային աշխատանքներում: Առանձին շինվածքներում ամրակումների իրականացման տեխնոլոգիական առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ: Գործնական աշխատանքները կատարվելու են փայտամշակման արհեստանոցում, որտեղ կան աշխատանքի նորմալ պայմաններ, անհրաժեշտ նյութեր, գործիքներ ու հարմարանքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Կատարել սոսնձային միացումներ
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում սոսինձների տեսակները,</p> <p>2) ճիշտ է բնութագրում տարբեր տեսակի սոսինձների հիմնական առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է կատարում ըստ առաջադրանքի սոսնձային միացումներ,</p> <p>4) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել սոսնձային միացումներ՝ օգտագործելով տարբեր տեսակի սոսինձներ:</p>

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Հյուսնային աշխատանքներում օգտագործվող սուսինձների տեսակները, դրանց բնութագրերը /ոսկրային, սպիտակուցային, սինթետիկ, էպօքսիդային, բազմավիներլացետատային, ֆենոլֆորմալդեհիդային և այլն/:</p> <p>Սուսինձների տարբեր տեսակների հատկությունները, դրանց կիրառումը սոսնձման աշխատանքները կատարելու ընթացքում:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, տեղեկագրքեր: Գործնական աշխատանքները կատարվելու են լավ օդափոխությամբ փայտամշակման արհեստանոցում, որտեղ կան անհրաժեշտ նյութեր, գործիքներ ու հարմարանքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Կատարել անկյունային միացումներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անկյունային միացումների հիմնական տեսակները, 2) ճիշտ է կատարում անկյունային միացումների էսքիզները և աշխատանքային գծագրերը, 3) ճիշտ է կատարում չափանշում, գծանշում, 4) ճիշտ է պատրաստում անկյունային միացման հանգուցամասերը, 5) ճիշտ է միացնում հանգուցամասերը, կատարում է ամրացման աշխատանքներ, 6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է շարունակական գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է կատարի տարբեր տեսակների անկյունային միացումներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Անկյունային միացումների կիրառումը հյուսնային աշխատանքներում: Անկյունային միացումների</p>

	<p>առանձնահատկությունները, թերությունները և առավելությունները: Անկյունային միացումների տեսակները. միակի բաց միջանցիկ բութակային, միակի թաքնակերպված միջանցիկ գաղտնաբութակային, միակի թաքնակերպ փակ բութակային, եռակի միջանցիկ բաց բութակային, ուղղակի փայտի կեսով մակադրակով, միջանցիկ ծիծեռնակապոչ միացումները: Դրանց իրականացման տեխնոլոգիան:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, ցուցանմուշներ: Գործնական աշխատանքները կատարվելու են նորմալ աշխատանքային պայմաններ ունեցող և անհրաժեշտ նյութերով, գործիքներով, հարմարանքներով ու սարքավորումներով ապահովված փայտամշակման արհեստանոցում:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Կատարել ճակատային միացումներ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ճակատային միացումների մեխանիկական բնութագրերը, 2) ճիշտ է կատարում ճակատային միացումների էսքիզները և աշխատանքային գծագրերը, 3) ճիշտ է կատարում չափանշում, գծանշում, 4) ճիշտ է պատրաստում ճակատային միացման հանգուցամասերը, 5) ճիշտ է հավաքում ճակատային միացման հանգուցամասերը, կատարում է ամրացման աշխատանքներ, 6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է շարունակական գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է կատարի ճակատային միացման գործողությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Ճակատային միացումների առանձնահատկությունները, դրանց միջոցով լուծվող մասնագիտական խնդիրները /սեղմումադիմադրողականություն, ձգումադիմադրողականություն, ծռմանադիմադրողականություն/, կատարվող</p>

	<p>հաշվարկները: Ճակատային միացումների վերաբերյալ հաշվարկները: Օգտագործվող հանգուցամասերը: Ճակատային միացումների կատարման տեխնոլոգիան:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, ցուցանմուշներ: Գործնական աշխատանքները կատարվելու են նորմալ աշխատանքային պայմաններ ունեցող և անհրաժեշտ նյութերով, գործիքներով, հարմարանքներով ու սարքավորումներով փայտամշակման արհեստանոցում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	Կատարել կողային միացումներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում տարբեր կողային միացումների մեխանիկական բնութագրերը, 2) ճիշտ է կատարում տարբեր կողային միացումների էսքիզներ և աշխատանքային գծագրեր, 3) ճիշտ է կատարում չափանշում, գծանշում, 4) ճիշտ է պատրաստում կողային միացումների հանգուցամասերը, 5) ճիշտ է միացնում հանգուցամասերը, կատարում է ամրացման աշխատանքներ, 6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է շարունակական գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է կատարի կողային միացման գործողությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Կողային միացումների կիրառումը հյուսնային աշխատանքներում, դրանց առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները: Կողային միացումների վերաբերյալ հիմնական հաշվարկները, օգտագործվող հանգուցամասերը: Կողային միացումների տեսակները՝ հարթափորակներով, ներդրովի ձողերով, քառորդանով, ակոսով և սանրիկով, եզրածածկով, վրածածկով, գրանց կիրառման պայմանները:</p>

	Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, ցուցանմուշներ: Գործնական աշխատանքները կատարվելու են նորմալ աշխատանքային պայմաններ ունեցող և անհրաժեշտ նյութերով, գործիքներով, հարմարանքներով ու սարքավորումներով փայտամշակման արհեստանոցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 գործնական աշխատանք՝ 10
Ուսումնառության արդյունք 6	Կատարել T-աձև և խաչաձև միացումներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում և բնութագրում T-աձև և խաչաձև միացումների մեխանիկակն բնութագրերը, 2) ճիշտ է կատարում T-աձև և խաչաձև միացումների էսքիզները և աշխատանքային գծագրերը, 3) ճիշտ է կատարում չափանշում, գծանշում, 4) ճիշտ է պատրաստում միացումների հանգուցամասերը, 5) ճիշտ է միացնում հանգուցամասերը, կատարում է ամրացման աշխատանքներ, 6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է շարունակական գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը պետք է կատարի T-աձև և խաչաձև միացումների գործողությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>T-աձև և խաչաձև միացումներ, դրանց հիմնական բնութագրերը, կիրառումը հյուսնային աշխատանքների ընթացքում: Միացումների տեսակները՝ T-աձև նեղ գաղտնաբուխակային ծիծեռնակապոչ, ուղիղ աստիճանային մակադրակով, խաչաձև կես փայտի մակադրակով, միաբուն նստեցումով: T-աձև և խաչաձև միացումների կիրառման երաշխավորվող դեպքերը: Միացումների կատարման վերաբերյալ հաշվարկները, անհրաժեշտ հանգուցամասերը: Միացումների թերությունները և առավելությունները, կատարման տեխնոլոգիան:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական</p>

	թերություններով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, ցուցանմուշներ: Գործնական աշխատանքները կատարվելու են նորմալ աշխատանքային պայմաններ ունեցող և անհրաժեշտ նյութերով, գործիքներով, հարմարանքներով ու սարքավորումներով ապահովված փայտամշակման արհեստանոցում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՍՏՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել փայտամշակման հաստոցներով տիպային դետալներ պատրաստելու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	90 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 28 ժամ գործնական աշխատանք՝ 62 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-004 «Փայտանյութերի հիմնական հատկությունների բնութագրման ունակություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի ընդլայնական և ընդերկայնական սղոցման սկավառակասղոցային ուսումնական հաստոցները, 2) ներկայացնի ֆուգանային, ֆրեզերային և ռեյսմուսային ուսումնական հաստոցները, 3) ներկայացնի բութակահանման, գայլիկոնման-փորակման և շաղափման ուսումնական հաստոցները, 4) ներկայացնի հղկման ուսումնական հաստոցը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ընդլայնական և ընդերկայնական սղոցման սկավառակասղոցային ուսումնական հաստոցները

<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում ընդլայնական սղոցման սկավառակասղոցային հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում ընդերկայնական սղոցման սկավառակասղոցային հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում սկավառակային սղոցների տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, 5) ճիշտ է չափանշում, գծանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը, 6) ճիշտ է գործարկում և անջատում հաստոցները, 7) ճիշտ է կատարում ըստ առաջադրանքի նախապատրաստվածքի մշակման գործընթացները, 8) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի աշխատել ընդլայնական և ընդերկայնական հաստոցների վրա, կատարել որոշակի գործողություններ, իրականացնել հաստոցների տեխնիկական սպասարկման գործողություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Ընդերկայնական և ընդլայնական սղոցման սկավառակասղոցային հաստոցների հիմնական մասերը՝ հենոցներ, սեղաններ, էլեկտրական շարժաբերեր, փոկային փոխանցումներ, տարբեր տրամագծերի սկավառակային սղոցներ:</p> <p>Դրանց աշխատանքի սկզբունքը և կիրառումը հյուսնային աշխատանքների ընթացքում: Հաստոցների տիպերը և աշխատանքի սկզբունքը: Հաստոցների աշխատանքային ռեժիմները: Հաստոցների նախապատրաստումը աշխատանքի համար: Հաստոցների տեխնիկական սպասարկման գործողությունները և իրականացումը: Օգտագործվող օժանդակ հարմարանքները: Աշխատանքային տեղի նկարագիրը և կահավորումը: Աշխատանքի անվտանգության կանոնները հաստոցներով աշխատելու ժամանակ:</p> <p>Հաստոցների վրա աշխատանքի տեխնոլոգիական բնութագրերը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական</p>

	թերություններով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ընդլայնական և ընդերկայնական սղոցման սկավառակասղոցային հաստոցներ, հանգույցները և մեխանիզմները դիդակտիկ տեսքով, հաստոցների վերաբերյալ գրականություն, պաստառներ, հաստոցների և մեխանիզմների կինեմատիկ սխեմաներ, մշակվող նախապատրաստվածքների պաստառ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ֆուգանային, ֆրեզերային և ռեյսմուսային ուսումնական հաստոցները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում ֆուգանային հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում ռեյսմուսային հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում ֆրեզերային հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 5) ճիշտ է ներկայացնում դանակագլանների և ֆրեզների տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, 6) ճիշտ է չափանշում, գծանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը, 7) ճիշտ է գործարկում և անջատում հաստոցները, 8) ճիշտ է կատարում ըստ առաջադրանքի նախապատրաստվածքի մշակման գործընթացները, 9) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի աշխատել ֆուգանային, ֆրեզերային և ռեյսմուսային հաստոցների վրա, կատարել դրանց տեխնիկական սպասարկման գործողություններ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ Ֆուգանային հաստոցի հիմնական հանգույցները՝ հենոց, աշխատանքային սեղան, դանակագլան, փոկային շարժաբեր: Հաստոցի աշխատանքի սկզբունքը և գործարկումը: Հաստոցի աշխատանքային ռեժիմները, դրանց

	<p>կարգավորման կարգը: Հաստոցի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմը և իրականացումը: Ռեյսմուսային հաստոցի հիմնական մասերը՝ հենոց, աշխատանքային սեղան, դանակագլաններ, փոկային շարժաբեր: Հաստոցի աշխատանքի սկզբունքը և գործարկումը: Հաստոցի աշխատանքային ռեժիմները, դրանց կարգավորման կարգը: Հաստոցի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմը և իրականացումը: Ֆրեզերային հաստոցի հիմնական մասերը՝ հենոց, աշխատանքային սեղան, ֆրեզներ, փոկային շարժաբեր: Հաստոցի աշխատանքի սկզբունքը և գործարկումը: Հաստոցի աշխատանքային ռեժիմները, դրանց կարգավորման կարգը: Հաստոցի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմը և իրականացումը: Աշխատանքի անվտանգության կանոնները աշխատանքի ընթացքում: Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ֆուգանային, ֆրեզերային և ռեյսմուսային հաստոցներ, հանգույցները և մեխանիզմները դիտակտիկ տեսքով, հաստոցների վերաբերյալ գրականություն, պաստառներ, հաստոցների և մեխանիզմների կինեմատիկ սխեմաներ, մշակվող նախապատրաստվածքների պաստառ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել բութակահանման, գայլիկոնման-փորակման և շաղափման ուսումնական հաստոցները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում բութակահան հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում գայլիկոնման-փորակման հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում շաղափման հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 5) ճիշտ է ներկայացնում կտրող աշխատանքային գործիքների (գայլիկոնների, շաղափիչների և բութակահանիչների) տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, 6) ճիշտ է չափանշում, գծանշում, ընտրում տեղակայման բազան և տեղակայում նախապատրաստվածքը,

	<p>7) ճիշտ է գործարկում և անջատում հաստոցները,</p> <p>8) ճիշտ է կատարում ըստ առաջադրանքի նախապատրաստվածքի մշակման գործընթացները,</p> <p>9) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի աշխատել բութակահանման, գայլիկոնման-փորակման և շաղափման հաստոցների վրա, կատարել նաև տեխնիկական սպասարկման գործողություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Բութակահան հաստոցի հիմնական մասերը՝ հենոց, շարժաբեր, աշխատանքային սեղան, բութակահանման գլխիկ: Դրանց նշանակությունը և կառուցվածքը: Հաստոցի աշխատանքի սկզբունքը, աշխատանքային ռեժիմները, կիրառվող օժանդակ հարմարանքները: Տեխնոլոգիական գործողությունների կատարման կարգը: Հաստոցի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմը և իրականացումը:</p> <p>Գայլիկոնման-փորակման հաստոցի հիմնական մասերը՝ հենոց, փոկային շարժաբեր, աշխատանքային սեղան, գայլիկոնման գլխիկ: Դրանց նշանակությունը և կառուցվածքը: Հաստոցի աշխատանքի սկզբունքը, աշխատանքային ռեժիմները, կիրառվող օժանդակ հարմարանքները: Տեխնոլոգիական գործողությունների կատարման կարգը: Հաստոցի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմը և իրականացումը:</p> <p>Շաղափման հաստոցի հիմնական մասերը՝ հենոց, շարժական սեղան, շարժաբեր, շաղափման գլխիկ: Դրանց նշանակությունը և կառուցվածքը: Հաստոցի աշխատանքի սկզբունքը, աշխատանքային ռեժիմները, կիրառվող օժանդակ հարմարանքները: Տեխնոլոգիական գործողությունների կատարման կարգը: Հաստոցի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմը և իրականացումը:</p> <p>Աշխատանքի անվտանգության կանոնները հաստոցների աշխատանքի ընթացքում:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բութակահանման, գայլիկոնման-փորակման և շաղափման հաստոցներ, հանգույցները և մեխանիզմները դիտակտիկ</p>

	տեսքով, հաստոցների վերաբերյալ գրականություն, պաստառներ, հաստոցների և մեխանիզմների կինեմատիկ սխեմաներ, մշակվող նախապատրաստվածքների պաստառ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հղկման ուսումնական հաստոցը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պարզաբանում աշխատատեղին ներկայացվող պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում հղկման հաստոցի աշխատանքի սկզբունքը և կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում հղկասկավառակների և հղկաժապավենների տեսակները, մեկնաբանում կատարվող աշխատանքների սկզբունքները, 4) ճիշտ է տեղադրում հղկասկավառակները և հղկաժապավենները և կարգաբերում դրանց ձգվածությունը, 5) ճիշտ է գործարկում և անջատում հաստոցը, 6) ճիշտ է կատարում ըստ առաջադրանքի փայտե հանգուցամասերի հղկման գործընթացները, 7) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի աշխատել հղկման հաստոցի վրա, կատարել նաև տեխնիկական սպասարկման գործողություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Հղկման հաստոցի հիմնական մասերը՝ հենոց, շարժաբեր, հղկաժապավեն, շարժական սեղան: Դրանց նշանակությունը և կառուցվածքը: Հաստոցի աշխատանքի սկզբունքը, աշխատանքային ռեժիմները, դրանց կարգավորումը, կիրառվող օժանդակ հարմարանքները: Տեխնոլոգիական գործողությունների կատարման կարգը: Հաստոցի տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմը և իրականացումը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ: Գործնական աշխատանքները կատարվելու են

	փայտամշակման արհեստանոցում, որտեղ կան աշխատանքի նորմալ պայմաններ, համապատասխան հաստոցներ, անհրաժեշտ նյութեր, գործիքներ ու հարմարանքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՌՆԵՐԻ ԴԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-008
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տարբեր տեսակի դռների պատրաստման հմտություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 56 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-006 «Հյուսնային միացումներ պատրաստելու, ամրացնելու հմտություններ» և ՀՅՍ-3-15-007 «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի դռների տեսակները ըստ նշանակության և ըստ կառուցվածքի, 2) ներկայացնի երեսամշակման մակերևույթների նախնական մշակման համար անհրաժեշտ նյութերը, գործիքները, կատարի մակերևույթների նախապատրաստման աշխատանքները, կատարի երեսամշակում, 3) ներկայացնի երեսապատման համար նախատեսված նյութերի ֆիզիկամեխանիկական և էսթետիկական բնութագրերը, կատարի երեսապատում, 4) ըստ առաջադրանքի պատրաստի մուտքի դուռ, 5) ըստ առաջադրանքի պատրաստի միջսենյակային դուռ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել դռների տեսակները, կառուցվածքները

Կատարման չափանիշներ	<p>1) ըստ հատկանիշների և նշանակության ճիշտ է ներկայացնում դռների տեսակները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում դռների կառուցվածքը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է խմբային ամփոփ քննարկման միջոցով, որի ընթացքում ուսանողները ցուցադրելու են դռների վերաբերյալ յուրացրած հենքային գիտելիքների մակարդակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <p>Դռների տեսակները, դրանց բնութագրիչ հասկացությունները: Դռների խմբավորման հատկանիշները: Դռների կառուցվածքային հիմնական տարրերը /փեղկ, շրջանակ, պարակալ, խտրակ, շրջակապ, միջնափայտ, լողաթ, սարքեր, կիպարար/, դրանց ներկայացվող շահագործողական պահանջները: Դռների պատրաստման համար օգտագործվող նյութերը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե ուսանողը քննարկման ընթացքում ընդհանուր առմամբ ցուցաբերում է բավարար և հիմնավոր գիտելիքներ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, տեղեկագրեր, ուսումնական պլակատներ, դռների ուսումնական ցուցանմուշներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել երեսամշակման մակերևույթների նախապատրաստման համար օգտագործվող նյութերի բնութագրերը, գործիքների տեսակները, կատարել մակերևույթների նախապատրաստման աշխատանքները, երեսամշակում</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է մեկնաբանում մակերևույթների երեսամշակման համար օգտագործվող նյութերի բնութագրերը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում երեսամշակման ձեռքի գործիքների տեսակները,</p> <p>3) ճիշտ է կատարում մակերևույթների նախապատրաստումը,</p> <p>4) ճիշտ է կատարում երեսամշակումը,</p> <p>5) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել</p>

	<p>Երեսամշակման գործողություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Երեսամշակման աշխատանքների ընդհանուր բնութագիրը և անհրաժեշտությունը: Երեսամշակման մակերևութների նախապատրաստման համար օգտագործվող նյութերը՝ հղկաթուղթ, հղկման մածիկ, հղկման փոշի, նախաներկ, ծակոտացիչ, մածիկ, խեժազերծման և սպիտակեցման նյութեր: Դրանց բնութագրերը և տեսականին:</p> <p>Երեսամշակման ձեռքի գործիքներ՝ մածկաթիակ, վրձիններ, խից: Տեսականին և բնութագրերը:</p> <p>Երեսամշակման աշխատանքների տեխնոլոգիական բնութագրերը, կատարման կարգը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, անհրաժեշտ նյութերով, գործիքներով ու հարմարանքներով ապահովված փայտամշակման արհեստանոց::</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել երեսապատման համար օգտագործվող նյութերի բնութագիրը, կատարել երեսապատում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է մեկնաբանում երեսապատման համար օգտագործվող նյութերի տեսակները, 2) ճիշտ է կատարում երեսապատում, 3) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել երեսապատման գործողություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Երեսապատման աշխատանքների բնութագիրը և անհրաժեշտությունը: Երեսապատման համար օգտագործվող նյութեր՝ ներկանյութ, լցանյութ, լուծիչ, նոսրացուցիչ, պլաստիկարար, թաղանթագոյացնող նյութեր, լաքեր, արծնուկ, սոսինձ, խեժասինթեթիկ ժապավեն և այլն: Դրանց տեսականին և բնութագրերը: Երեսապատման նյութերի</p>

	<p>օգտագործման կարգը, դրանց նախապատրաստումը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, անհրաժեշտ նյութերով, գործիքներով ու հարմարանքներով ապահովված փայտամշակման արհեստանոց::</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	Պատրաստել մուտքի դուռ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ըստ առաջադրանքի ճիշտ է կատարում մուտքի դռան էսքիզները և աշխատանքային գծագրերը, 2) ճիշտ է կատարում չափադրումները, գծանշումները, պատրաստում շինվածքամասերը, 3) ճիշտ է կատարում շինվածքամասերի բութակային միացումները՝ օգտագործելով նաև սոսնձանյութեր, 4) ճիշտ է կատարում երեսամշակում, 5) ճիշտ է կատարում երեսապատում, 6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է շարունակական գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողը պետք է ըստ կատարված էսքիզների և աշխատանքային գծագրերի պատրաստի մուտքի դուռ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Մուտքի դռան պատրաստման համար անհրաժեշտ չափումները և հաշվարկները: Մուտքի դռան պատրաստման տեխնոլոգիական աշխատանքների հաջորդականությունը, հսկողությունը աշխատանքների ընթացքի նկատմամբ: Պահանջվող հումքի և նյութերի հաշվարկը: Աշխատանքների ընթացքում աշխատանքի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ</p>

	մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, անհրաժեշտ նյութերով, գործիքներով ու հարմարանքներով ապահովված փայտամշակման արհեստանոց::
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Պատրաստել միջսենյակային դուռ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում միջսենյակային դռան էսքիզները և աշխատանքային գծագրերը, 2) ճիշտ է կատարում չափադրումները, գծանշումները, պատրաստում շինվածքամասերը, 3) ճիշտ է կատարում շինվածքամասերի բութակային միացումները՝ օգտագործելով նաև սոսնձանյութեր, 4) ճիշտ է կատարում երեսամշակում, 5) ճիշտ է կատարում երեսապատում, 6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողը պետք է ըստ կատարված էսքիզների և աշխատանքային գծագրերի պատրաստի միջսենյակային դուռ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Միջսենյակային դռան պատրաստման համար անհրաժեշտ չափումները և հաշվարկները: Միջսենյակային դռան պատրաստման տեխնոլոգիական աշխատանքների հաջորդականությունը, հսկողությունը աշխատանքների ընթացքի նկատմամբ: Պահանջվող հումքի և նյութերի հաշվարկը: Աշխատանքների ընթացքում աշխատանքի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, անհրաժեշտ նյութերով, գործիքներով ու հարմարանքներով ապահովված փայտամշակման արհեստանոց:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 14 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-009
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տարբեր տեսակի պատուհանների պատրաստման հմտություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 60 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-006 «Հյուսնային միացումներ պատրաստելու, ամրացնելու հմտություններ» և ՀՅՍ-3-15-007 «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի պատուհանների տեսակները և կառուցվածքը, 2) պատրաստի պատուհան:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել պատուհանների տեսակները և կառուցվածքը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պատուհանների տեսակները, 2) ճիշտ է մեկնաբանում պատուհանների կառուցվածքային առանձնահատկությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է խմբային ամփոփիչ քննարկման հիման վրա, որի ընթացքում ուսանողները ցուցադրելու են պատուհանների վերաբերյալ յուրացրած գիտելիքները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ Պատուհանների տեսակները և կառուցվածքային առանձնահատկությունները՝ միափեղկ, երկփեղկ, միատակ, երկտակ, ներսբացվող, դուրսբացվող, ուղղանկյուն, կամարածև, օդափոխիչով և այլն: Պատուհանների կառուցվածքային տարրերը, դրանց նշանակությունը: Պատուհանների պատրաստման համար օգտագործվող հումքը

	<p>և նյութերը, դրանց ներկայացվող պահանջները: Պատուհանների պատրաստման տեխնոլոգիական գործընթացների բնութագիրը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե քննարկման ընթացքում ուսանողը ցուցաբերում է բավարար և հիմնավոր գիտելիքներ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, տարբեր տեսակի պատուհանների ցուցանմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Պատրաստել պատուհան
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պատկերում ըստ առաջադրանքի պատուհանի էսքիզները և աշխատանքային գծագրերը, 2) ճիշտ է կատարում չափադրումները, գծանշումները, պատրաստում շինվածքամասերը, 3) ճիշտ է կատարում բուֆակահանման գործընթացները, 4) ճիշտ է կատարում շինվածքամասերի բուֆակային միացումները, 5) ըստ աշխատանքային գծագրերի ճիշտ է կատարում ծխնիների, փականների և բռնակների տեղերի փորակումը և դրանց տեղադրումը, 6) ճիշտ է երեսամշակում և երեսապատում, 7) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողը պետք է ըստ կատարված էսքիզների և աշխատանքային գծագրերի պատրաստի պատուհան:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Պատուհանների պատրաստման ժամանակ օգտագործվող հիմնական ելակետային ցուցանիշները, դրանց չափումը և անհրաժեշտ հաշվարկները: Թույլատրելի շեղումները: Աշխատանքների հաջորդականության պլանավորումը: Հումքի նախապատրաստումը հետագա մշակման համար: Հիմնական տեխնոլոգիական գործընթացների բնութագիրը: Աշխատանքների միջանկյալ հսկողության կազմակերպումը: Կիրառվող գործիքները և հարմարանքները, դրանց</p>

	<p>կիրառումը և սպասարկումը: Ավարտուն արտադրանքի որակի հսկողության ապահովումը: Աշխատանքի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, նորմալ աշխատանքային պայմաններ ունեցող և անհրաժեշտ նյութերով, հաստոցներով, գործիքներով ու հարմարանքներով ապահովված փայտամշակման արհեստանոց:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 52 ժամ</p>
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Տ Ա Խ Տ Ա Կ Ե Հ Ա Տ Ա Կ Ի Փ Ա Յ Տ Ե Ծ Ի Ն Վ Ա Ծ Ք Ա Մ Ա Ս Ե Ր Ի Պ Ա Տ Ր Ա Ս Մ Ա Ն Հ Մ Տ ՈՒԹ Յ ՈՒՆՆ ԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-010
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տախտակե հատակի փայտե շինվածքամասերի պատրաստման հմտություններ:
Մոդուլի տևողությունը	<p>56 ժամ որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 22 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 34 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-007 «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի տախտակե հատակի կառուցվածքը, օգտագործվող նյութերը, կատարի հատակի չափագծումներ, 2) կատարի տախտակե հատակի փայտե շինվածքամասերի էքզիզները, աշխատանքային գծագրերը, պատրաստի տախտակե հատակի փայտե շինվածքամասերը, 3) ներկայացնի ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և էլեկտրամեկուսիչ նյութերի հիմնական բնութագրերը,

	4) ներկայացնի տափագերանների կարգավորման ձևերը և մեթոդները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տախտակե հատակի կառուցվածքը, օգտագործվող նյութերը, կատարել հատակի չափագծումներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է մեկնաբանում հատակի տեսակները՝ ըստ հատկանիշների և նշանակության, կառուցվածքի և նյութի, 2) ճիշտ է ներկայացնում հատակի կառուցվածքը, 3) ճիշտ է կատարում չափագծումները, 4) ճիշտ է մեկնաբանում օգտագործվող նյութերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է խմբային ամփոփիչ քննարկման և գործնական առաջադրանքի միջոցով:</p> <p>Քննարկման ընթացքում ստուգվելու է տախտակե հատակի վերաբերյալ ուսանողի յուրացրած գիտելիքները, իսկ գործնական առաջադրանքի միջոցով կատարելու է չափագծումներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Տախտակե հատակի կառուցման հիմնական մոտեցումները, տախտակե հատակի տեսակները՝ հատային մանրատախտակե, փայտազանգվածային հատակատախտակե, շերտային հատակատախտակե, փայտավահանային (փայտասալային), գեղարվեստական, դրանց առանձնահատկությունները:</p> <p>Փայտե հատակի կառուցվածքները ըստ կառուցման եղանակի՝ հիմքին սոսնձված, բարձր հարմարավետությամբ, նրբատախտակի կիրառումով՝ հիմքի հավասարեցմամբ, տափագերաններով, տափագերանների կարգավորելիությամբ, լողացող: Յուրաքանչյուրի կառուցման առանձնահատկությունները և աշխատանքների կազմը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է բավարար և հիմնավոր գիտելիքներ, իսկ գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ուսումնական գրականություն, անհրաժեշտ նյութեր, չափագրման գործիքներ ու հարմարանքներ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 6 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Պատրաստել տախտակե հատակի փայտե շինվածքամասերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պատկերում տախտակե հատակի փայտե շինվածքամասերի էսքիզները, 2) ճիշտ է պատկերում տախտակե հատակի փայտե շինվածքամասերի աշխատանքային գծագրերը, 3) ճիշտ է պատրաստում տախտակե հատակի փայտե շինվածքամասերը, 4) պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է շարունակական գործնական առաջադրանքի միջոցով, որի ընթացքում ուսանողը պատրաստելու է անհրաժեշտ շինվածքամասերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Տախտակե հատակի կառուցվածքային տարրերը, օգտագործվող հումքը և նյութերը: Ըստ տեղամասերի հումքի և նյութերի ընտրությունը: Հատակի պատրաստման համար կիրառվող հիմնական չափումները: Դրանց տեղակայումը գծագրերի և էսքիզների վրա: Անհրաժեշտ նյութերի քանակության հաշվարկը: Շինվածքամասերի պատրաստման տեխնոլոգիական հաջորդականությունը: Գործիքների ու սարքերի ընտրությունը, կիրառումը, սպասարկումը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, անհրաժեշտ նյութեր, համապատասխան հաստոցներով, գործիքներով ու հարմարանքներով ապահովված փայտամշակման արհեստանոց:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և էլեկտրամեկուսիչ նյութերի բնութագիրը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ջերմապահպանիչ նյութերի շերտի հիմքի ձևախախտումը, 2) ճիշտ է ընտրում ջերմապաշտպանիչ շերտի բեռնվածության դիմադրողականությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի թեստ, ըստ

	<p>որի նա պետք է ճիշտ ընտրի տարբեր ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և էլեկտրամեկուսիչ նյութերի տեխնիկական բնութագրերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և էլեկտրամեկուսիչ նյութերի տեսակները, դրանց կիրառումը տախտակե հատակի կառուցման ընթացքում /ազբեստային ստվարաթուղթ, տորֆային, ֆիբրիտային, խցանային սալեր, խեժաթուղթ և այլն/: Ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և էլեկտրամեկուսիչ նյութերի կիրառման տեխնոլոգիայի առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե թեստային առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, ուսումնական գրականություն, համապատասխան նյութեր, անհրաժեշտ գործիքներ, սարքավորումներ, հարմարանքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել տափազերանների կարգավորման ձևերը և մեթոդները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում տափազերանները դասավորելու ճշտությունը՝ օգտագործելով հարթաչափերը, 2) ճիշտ է ներկայացնում տափազերանների միջև հեռավորության չափը, 3) ճիշտ է կատարում տափազերանների տեղակայում՝ հաշվի առնելով սենյակի բարձրությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի մեկնաբանել տափազերանների կարգավորման ձևերն ու մեթոդները և պատասխանել հարցերին:</p> <p>Որպես գործնական առաջադրանք ուսանողը պետք հարթաչափերի միջոցով ճիշտ դասավորի տափազերանները, ներկայացնի տափազերանների միջև հեռավորության ճիշտ չափը, ճիշտ տեղակայի տափազերանները՝ կախված սենյակի բարձրությունից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում</p>

	հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, ուսումնական գրականություն, համապատասխան նյութեր, անհրաժեշտ գործիքներ և հարմարանքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱՆԻՔԻ ՓԱՅՏԵ ՇԻՆՎԱԾՔԱՄԱՍԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՅՍ-3-15-011
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տանիքի փայտե շինվածքամասերի պատրաստման հմտություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ որից՝ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 56 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՅՍ-3-15-007 «Փայտամշակման հաստոցներով աշխատանքների հմտություններ» մոդուլը:
	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի տանիքի տեսակները, 2) ներկայացնի կրող մասի կառուցվածքը, պատկերել կրող մասի շինվածքների էսքիզը և աշխատանքային գծագիրը, 3) ընտրի ծպեղի նախապատրաստվածքը, 4) ներկայացնի ծպեղների կառուցվածքային տարերը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տանիքի տեսակները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տանիքի տեսակները,

	<p>2) ճիշտ է կատարում տանիքի չափանշումը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տանիքների կոնստրուկցիոն էլեմենտները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է խմբային քննարկման և գործնական առաջադրանքի միջոցով: Խմբային քննարկման ընթացքում ուսանողը ցուցադրելու է տանիքների վերաբերյալ յուրացրած գիտելիքները, իսկ գործնական առաջադրանքի ընթացքում կատարելու է տանիքների կառուցման հետ կապված չափանշման գործողություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <p>Տանիքի տեսակները /միալանջ, երկլանջ, վրանածև, գավակային, կիսագավակային, մանսարդային/, դրանց առանձնահատկությունները և կառուցման յուրահատկությունները: Տանիքի կոնստրուկցիոն էլեմենտները՝ կրող մաս, հիմք, մեկուսիչ շերտ, տանիքածածկ: Դրանց նշանակությունը: Ըստ շինության ձևի և տեսակի տանիքի ձևի ընտրության մոտեցումները: Տանիքի չափանշման ցուցանիշները, դրանց ձևավորումը և կիրառումը:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե քննարկման ընթացքում ուսանողը ցուցաբերում է բավարար և հիմնավոր գիտելիքներ, իսկ գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, անհրաժեշտ նյութեր, չափանշման և այլ գործիքներ ու հարմարանքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կրող մասի կառուցվածքը, պատկերել կրող մասի շինվածքների էսքիզը և աշխատանքային գծագիրը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կրող մասի կառուցվածքը 2) ճիշտ է կատարում կրող մասի շինվածքի էսքիզը և աշխատանքային գծագիրը, 3) ճիշտ է պատրաստում ծպեղի շինվածքամասերը, 4) ճիշտ է պատրաստում հեծանների հատակի շինվածքամասերը, 5) ճիշտ է պատրաստում հավաքման ձևվածքների շինվածքամասերը, 6) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել կրող մասի շինվածքների էսքիզներ, պատրաստել շինվածքամասերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Տանիքի կրող մասի կառուցվածքը՝ փայտե հեծաններ, ծպեղ, հավաքման ձևվածքներ, դրանց կառուցվածքային տարրերը: Տարրերի նշանակությունը, ներկայացվող պահանջները: Տանիքի կրող մասի կառուցման համար օգտագործվող հումքին ներկայացվող պահանջները: Ծպեղի շինվածքամասերը՝ ծպեղային ոտք, պարզունակ, հեծանային ծածկ, որմնափայտ, պրկան, կախաայուն, դիմկալ: Հումքի ծախսի հաշվարկը: Տեխնոլոգիական աշխատանքների հաջորդականությունը: Օգտագործվող գործիքները և հարմարանքները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, ուսումնական պլակատներ, գծագրական պլակատներ, անհրաժեշտ նյութեր, համապատասխան գործիքներ ու հարմարանքներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ընտրել ծպեղի նախապատրաստվածքը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում տանիքի կառուցվածքի հանգույցները, 2) ճիշտ է ներկայացնում տանիքի ձևավորումը և ամրության սահմանները, 3) ճիշտ է ներկայացնում մետաղական կարկասով ծպեղների կառուցվածքի բնութագիրը, 4) ճիշտ է պատրաստում փայտյա ծպեղները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել տանիքի կառուցվածքի հանգույցները, ձևավորումը, ամրության սահմանը, պատրաստել անհրաժեշտ դետալները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասեր՝</p> <p>Ծպեղի նշանակությունը և նախապատրաստվածքները՝ գերան, գերանակիսան, չորսուներ, տախտակներ: Դրանց</p>

	<p>պատրաստման և տեղակայման կարգը: Օգտագործվող գործիքները և սարքավորումները:</p> <p>Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ, ոչ էական թերություններով</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ուսումնական գրականություն, անհրաժեշտ նյութեր, համապատասխան գործիքներ ու հարմարանքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ծպեղների կառուցվածքային տարրերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կառուցվածքային տարրերը, 2) ճիշտ է ներկայացնում մետաղյա ամրակների դերը ծպեղի հանգույցների հավաքման ժամանակ, 3) ճիշտ է ներկայացնում հենովի և կախովի ծպեղների կառուցվածքի բնութագիրը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել և պարզաբանել ծպեղների կառուցվածքային տարրերը, հենակի և կախովի ծպեղների կառուցվածքային բնութագրերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>Ծպեղի կառուցվածքային տարրերը՝ ծպեղի ոտքեր, գազաթնագծի և կողային հենափայտեր, տապաստ, կանգնակ, կանգնակի տակդիր, որմնափայտ, երկայնական և լայնական դիմկալներ, պրկան, տանիքի՝ ծպեղի թեքման անկյուն:</p> <p>Դրանց նշանակությունը և բնութագրերը: Հենովի ծպեղների տեսակներ՝ հենովի ծպեղ տապաստով, հենովի ծպեղ տակդիրով, հենովի ծպեղ ուժեղացնող ձողային կառուցատարով:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարում առաջադրանքը՝ ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, անհրաժեշտ նյութեր, համապատասխան գործիքներ ու հարմարանքներ:</p>
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

ժամաքանակը

գործնական աշխատանք՝ 12 ժամ